ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը	
Նստարանի համարը	

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշ չէ.**

1) համալիրությունը
2) կոնկրետությունը
3) տարածականությունը
4) ռիթմիկությունը

2 **Արևմուտքի ազիմուտն է.**

1) 360˚
2) 90˚
3) 270˚
4) 180˚

3 **Երկու կետերի իրական հեռավորությունը 48 կմ է: 1 : 800 000 մասշտաբի քարտեզում նրանց հեռավորությունը կլինի.**

1) 60 սմ
2) 600 սմ
3) 0,6 սմ
4) 6 սմ

4 **Երկրի մակերևույթի որևէ փոքր հատվածի կամ օբյեկտի՝ մանրամասնություններով գծապատկերը թղթի վրա կոչվում է.**

1) գլոբուս
2) ատլաս
3) հատակագիծ
4) քարտեզ

5 **Տիեզերքում մեզ ամենամոտ աստղն է.**

1) Սիրիուսը
2) Արեգակը
3) Բևեռային աստղը
4) Անտարեսը

6 **Աշխարհագրական երկայնությունները լինում են.**

1) 0˚ - 360˚
2) 0˚ - 270˚
3) 0˚ - 180˚
4) 0˚ - 90˚

7 **Երկրի օրական պտույտի հետևանք է.**

1) պասսատների առաջացումը
2) ժամերի տարբերությունը
3) մագնիսական բևեռների առաջացումը
4) մուսսոնների առաջացումը

8 **Բնութագրումով որոշել Երկրի շերտը.**

Երկրագնդի այդ շերտն ընկած է երկրակեղևի տակ՝ մինչև 2900 կմ խորությունները, և Երկրի միջուկից վեր: Այդ շերտն է.

1) քարոլորտը
2) արտաքին միջուկը
3) միջնապատյանը
4) ներքին միջուկը

9 **Նստվածքային ծագման օրգանական ապար է.**

1) տուֆը
2) տորֆը
3) կավը
4) ավազը

10 **Մթնոլորտի շնորհիվ *չեն* առաջանում:**

1) մթնոլորտային տեղումները
2) գեյզերները
3) ծովային հոսանքները
4) քամիները

11 **Ո՞ր գոտին է գտնվում հյուսիսային և հարավային մերձհասարակածային կլիմայական գոտիների միջև:**

1) հասարակածային
2) արկտիկական
3) արևադարձային
4) բարեխառն

12 **Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 3200 մ է, գետաբերանինը՝ 1200 մ, երկարությունը՝ 250 կմ: Գետի թեքությունը կլինի.**

1) 15 մ/կմ
2) 8 մ/կմ
3) 12 մ/կմ
4) 6 մ/կմ

13 **Երկրակեղևի իջած տեղամասերում՝ գրաբեններում առաջացած լճերը կոչվում են.**

1) մնացորդային
2) արգելափակման
3) տեկտոնական
4) հնահունային

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ցունամիի պատճառը շատ ուժեղ քամիներն են:
2) Երկու ջրակայուն ապարաշերտերի միջև եղած ստորերկրյա ջուրը, որը կարող է դուրս շատրվանել վերին շերտը ծակելու դեպքում, կոչվում է արտեզյան ավազան:
3) Մակընթացության և տեղատվության երևույթը առաջանում է գերիշխող քամիների հետևանքով:
4) Մակընթացությունը օվկիանոսի ջրի մակարդակի իջեցման երևույթն է:

15 **Նկար 5-ում ո՞ր թվով է պատկերված անապատների գոտան:**

1) Գ
2) Դ
3) Ա
4) Բ



նկար 5

16 **Պամպաները ո՞ր մայրցամաքում են.**

1) Հյուսիսային Ամերիկայում
2) Եվրասիայում
3) Հարավային Ամերիկայում
4) Ավստրալիայում

17 **Բարեխառն գոտու փշատերև անտառները հիմնականում ո՞ր հողերի վրա են տարածվում.**

1) տունդրագլեյան
2) պոդզոլային
3) շագանակագույն
4) կարմրադեղին

18 **Ո՞ր օդային զանգվածներն են մշտապես տաք և խոնավ.**

1) արևադարձային
2) հասարակածային
3) բարեխառն
4) արկտիկական

քարտեզ 1

19 **Քարտեզ 1-ում ո՞ր պետությունն է նշված Զ տառով.**

1) Շվեդիա
2) Ֆինլանդիա
3) Դանիա
4) Նորվեգիա

20 **Քարտեզ 1-ում ո՞ր մայրաքաղաքն է նշված Ը տառով.**

1) Բեռլին
2) Վիլնյուս
3) Փարիզ
4) Հելսինկի

21 **Ո՞ր լեռնաշղթան է ձգվում հյուսիսից հարավ.**

1) Տյան Շան
2) Էլբուրս
3) Ուրալյան
4) Հիմալայներ

22 **Եվրասիայի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Կլիմայական գոտիներն իրար հաջորդում են հյուսիսից հարավ ուղղությամբ։
2) Արկտիկական կլիմայական գոտում ձմեռները խիստ են, երկարատև, ամառները՝ ցուրտ և կարճատև։
3) Մերձարկտիկական գոտում ամառը երկարատև է, բայց ցուրտ։
4) Մերձարկտիկական գոտում ամռանը տիրապետում են բարեխառն, իսկ ձմռանը՝ արկտիկական օդային զանգվածները։

23 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Կարիբյան ծովի ափերին և Անդերի հյուսիսային մասերի միջլեռնային ճկվածքներում կան նավթի հարուստ պաշարներ։
2) Լա Պլատայի դաշտավայրը շատ հարուստ է ոսկու պաշարներով։
3) Անդերը հարուստ է հատկապես պղնձի պաշարներով։
4) Բրազիլական և Գվիանական սարահարթերի հնագույն հիմքի բյուրեղային ապարները հարուստ են երկաթի և մանգանի պաշարներով։

24 **Ո՞ր լեռնագագաթն է Գրինվիչի միջօրեականից ավելի հեռու.**

1) Էլբրուս
2) Մոնբլան
3) Դեմավենդ
4) Մեծ Արարատ

25 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Հորմուզի նեղուցը միացնում է 2 օվկիանոսների ջրերը։
2) Սուեզի պարանոցը միացնում է երկու մայրցամաք։
3) Կարմիր ծովը ողողում է երկու աշխարհամասերի ափեր։
4) Միջերկրական ծովը ողողում է երեք աշխարհամասերի ափեր։

26 **Ո՞ր գետն է մեծամասամբ հոսում արևմուտքից արևելք.**

1) Օրանժ
2) Զամբեզի
3) Սենեգալ
4) Կոնգո

27 **Ո՞ր շարքում տրամաբանական *սխալ* կա.**

1) Տանգանիկա, Նյասա, Շարի
2) Դրակոնյան, Կապի, Ատլասի
3) Նամիբ, Կալահարի, Սահարա,
4) Զամբեզի, Օրանժ, Նեղոս

28 **Մակ – Քինլի լեռնագագաթի վրա մթնոլորտային ճնշումը 138 մմ է: Տվյալ պահին որքա՞ն կլինի մթնոլորտային ճնշումը Սահվան հովտում:**

1) 765,9 մմ
2) 760 մմ
3) 489,5 մմ
4) 481,4 մմ

29 **Ո՞ր կենդանատեսակներն են ապրում Հարավային Ամերիկայի խոնավ հասարակածային անտառներում.**

1) համրուկ և յագուար
2) լամա և գայլ
3) պեկարի վայրի խոզ և զրահակիր
4) կոնդոր և նանդու ջայլամ

30 **Ո՞ր նեղուցով է Նոր Գվինեա կղզին բաժանվում Ավստրալիայից.**

1) Բասի
2) Թորեսի
3) Պոլկի
4) Մալակկայի

31 **Խաղաղօվկիանոսյան երկրներ են.**

1) Ճապոնիան և Ֆիլիպինները
2) Հունաստանը և Բուլղարիան
3) Նորվեգիան և Լյուքսեմբուրգը
4) Վրաստանը և Թուրքմենստանը

32 **Գաճաճ պետություն չէ.**

1) Լիխտենշտայնը
2) Ալբանիան
3) Մոնակոն
4) Անդորրան

33 **Աշխարհի առավել խիտ բնակեցված տարածաշրջաններից է.**

1) Հարավարևմտյան Ասիան
2) Հյուսիսային Եվրոպան
3) Հյուսիսային Աֆրիկան
4) Արևելյան Ասիան

34 **Հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզվախումբ է.**

1) սեմականը
2) իրանականը
3) չինականը
4) թուրքականը

35 **«ժողովրդագրական ճգնաժամը» բնորոշ է.**

1) Հնդկաստանին
2) Ալժիրին
3) Մեքսիկային
4) Գերմանիային

36 **Ո՞ր երկրներն են զարգացման հետարդյունաբերական փուլում գտնվում:**

1) Ռուսաստանը և Վրաստանը
2) Բելգիան և Լյուքսեմբուրգը
3) Լեհաստանը և Պերուն
4) Եգիպտոսը և Սիրիան

37 **«Հանքավայր-հանքատեսակ» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Նորիլսկ-երկաթ
2) Սամոտլոր-նավթ
3) Սուրգուտ-ածուխ
4) Մագադան-գազ

38 **Ուկրաինայի քաղաքներից նավահանգիստ է.**

1) Լվովը
2) Կիևը
3) Խարկովը
4) Օդեսան

39 **Արևմտյան Եվրոպայի պետություններից չէ.**

1) Ֆինլանդիան
2) Նիդեռլանդները
3) Ֆրանսիան
4) Գերմանիան

40 **Գերմանական ո՞ր ընկերությունն է մասնագիտացել քիմիական արտադրանքի գծով.**

1) «Բայեր»
2) «Սիմենս»
3) «Բոշ»
4) «Ադիդաս»

41 **Տրված զաճաճ պետություններից միայն Շվեյցարիային և Ավստրիային սահմանակցում է.**

1) Անդորրան
2) Լիխտենշթայնը
3) Լյուքսեմբուրգը
4) Սան Մարինոն

42 **Ո՞ր քաղաքը Մեծ Բրիտանիայում չէ:**

1) Մանչեստրը
2) Գլազգոն
3) Մարսելը
4) Լիվերպուլը

43 **Ո՞ր թերակղզում է գտնվում Իտալիան:**

1) Բալկանյան
2) Կամչատկա
3) Ապենինյան
4) Պիրենեյան



քարտեզ 2

44 Քարտեզ 2–ում Արաքս գետը ո՞ր տառով է նշված.

1) Ա
2) Ը
3) Է
4) Բ

45 Քարտեզ 2–ում Կոտայքի մարզը ո՞ր տառով է նշված.

1) Գ
2) Ե
3) Զ
4) Ա

46 **Ո՞ր լեռնագագաթի բարձրությունն է 4434 մ.**

1) Սավալան
2) Արագած
3) Սիփան
4) Մասիս

47 **Ո՞ր լիճն ունի սառցադաշտային ծագում.**

1) Ուրմիա
2) Պարզ
3) Փարվանա
4) Քարի

48 **«Լեռնաշղթա — լեռնանցք» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Փամբակի — Որոտանի
2) Վայքի — Վարդենյաց
3) Զանգեզուրի — Սպիտակի
4) Բազումի — Պուշկինի

49 **Տրվածներից ո՞ր մարզն առավել շատ քաղաքային բնակավայր ունի.**

1) Լոռի
2) Կոտայք
3) Սյունիք
4) Շիրակ

50 **Ո՞ր գետն է պատկանում Կուրի ավազանին.**

1) Վարանդը
2) Խոնաշենը
3) Իշխանագետը
4) Կարկառը

51 **Ընդերքի ռեսուրսների որոշ տեսակներ խնայելու արդյունավետ միջոցառում չէ.**

1) մետաղների փոխարինումը սինթետիկ նյութերով
2) փակ եղանակով արդյունահանման փոխարինումը բաց եղանակով
3) անընդհատ նոր հանքավայրերի շահագործումը
4) մեքենաշինության մեջ փայտե մասերի փոխարինումը պլաստմասայով

52 **Մեկ տարում 1 հա-ից բուսական զանգվածի հավելաճը կոչվում է.**

1) միջին խտություն
2) կենսաբազմազանություն
3) արդյունավետություն
4) բերքատվություն

53 **Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.**

1) գետերով տեղափոխված անտառանյութը
2) տարատեսակ նավթամթերքները և ֆենոլները
3) գետերի ջրերում լուծված նյութերը
4) գեյզերների ջրերում լուծված նյութերը

54 **Մթնոլորտի աղտոտման հետևանք է.**

1) գերխոնավ հողերի բերրիության անկումը
2) ջերմոցային էֆեկտի առաջացումը
3) ստորերկրյա ջրերի մակարդակի բարձրացումը
4) էրոզիոն երևույթների զարգացումը

55 **Ո՞րն է հողերի դեգրադացման պատճառ.**

1) ռեկուլտիվացումը
2) անտառաբարելավումը
3) գերարածեցումը
4) անապատացումը

56 **Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել մնացորդային ծագում ունեցող լճերը.**

1) Վեներն
2) Բայկալ
3) Կասպից
4) Իսիկ Կուլ
5) Մեծ արջի
6) Արալյան
7) Մեծ ստրուկների
8) Տիտիկակա

57 **Գրել այն երկրների համարները, որոնք ելք ունեն դեպի ծով.**

1) Պերու
2) Չեխիա
3) Եգիպտոս
4) Չադ
5) Ավստրիա
6) Լիբանան
7) Պարագվայ
8) Մեքսիկա

58 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են խոզաբուծությամբ.**

1) Նոր Զելանդիա
2) Իրան
3) Կանադա
4) Գերմանիա
5) Չինաստան
6) Ճապոնիա
7) Բրազիլիա
8) Ուկրաինա

59 **Գրել այն երկրների համարները, որոնք կղզային են.**

1) Նիգերիա
2) Ֆիջի
3) Արգենտինա
4) Չիլի
5) Ֆրանսիա
6) Մադագասկար
7) Կոլումբիա
8) Իսլանդիա

60 **Գրել այն երկրների համարները, որոնք ունեն հետարդյունաբերական զարգացման մակարդակ ունեցող տնտեսություն.**

1) Ավստրիա
2) Դանիա
3) Հունաստան
4) Բուլղարիա
5) Բելգիա
6) Բրազիլիա
7) Թուրքիա
8) Մոլդովա

61 **Գրել այն ջրէկների համարները, որոնք մտնում են Սևան-Հրազդան կասկադի մեջ.**

1) Արգելի
2) Երևանի
3) Քանաքեռի
4) Տաթևի
5) Արզնիի
6) Շամբի
7) Այրումի
8) Զորագետի

62 **Կուրի ավազանին պատկանող գետերի համարները դասավորել դրանց ջրառատության աճման կարգով:**

1) Աղտսև
2) Տավուշ
3) Դեբեդ

63 **ՀՀ հողային տիպերի համարները դասավորել ըստ դրանց տարածման բարձրությունների հետևյալ հաջորդականությամբ՝ մինչև 1300 մ, 1300-2400 մ, 2100-2500 մ**

1) կիսաանապատային գորշ
2) լեռնային սևահող
3) մարգագետնատափաստանային

(64-65). Աշտարակ քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են –1°, -4°, -6°, -2°, +7°, +16°, +10°, +4° ցուցանիշները:

64	*Որոշել օդի ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):*

65	Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

66	Երկրում բնակչության թիվը 1,8 մլն է, մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը՝ 54000 մարդ: Որքա՞ն կլինի ծնելիության գործակիցը (‰):

67 Որոշել ավտոտրանսպորտով կատարվող ուղևորաշրջանառությունը, եթե երկրում տարեկան փոխադրվում է 4000 ուղևոր, իսկ փոխադրման միջին հեռավորությունը 12 կմ է:

68 Երկրրում բրնձի համախառն բերքը կազմում է 690 000 ց, իսկ զբաղեցրած ցանքատարածությունների մակերեսը՝ 30 000 հա: Որքա՞ն է միջին բերքատվությունը:

69 **Աշխարհի բուսաբուծության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Թելատու մշակաբույսերից է բամբակենին, որի ցանքատարածությունները հիմնականում բարեխառն գոտու զոնայում են։
2) Առույգացնող մշակաբույսերից են սուրճը, որի հայրենիքը Եթովպիան է, կակաոն, որի հայրենիքը Մեքսիկան և թեյը, որի հայրենիքը Չինաստանն է։
3) Արևմտյան Եվրոպայի երկրներում գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է։
4) Բուսաբուծության տեղաբաշխման՝ մշակաբույսերի աճեցման վայրի ընտրության գործում կարևորագույն գործոնը տրանսպորտային ապահովվածությունն է։
5) Բուսաբուծությունը բաղկացած է դաշտավարությունից՝ դաշտային մշակաբույսերի աճեցումից և այգեգործությունից՝ տարատեսակ մրգերի, ծառերի և թփերի աճեցումից։
6) Դաշտավարության մեջ գլխավոր դերը պատկանում է հացահատիկային մշակաբույսերին, մասնավորապես՝ ցորենին, բրնձին և եգիպտացորենին։

70 **ՀՀ թեթև արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Ճյուղը աշատատար է։
2) Մետաքսաթելի, մետաքսե գործվածքների արտադրության միակ կենտրոնը Երևանն է։
3) Ճյուղի երիտասարդ ենթաճյուղերից է կոշկագործությունը։
4) Գորգագործությունը չունի արտահանման նշանակություն։
5) Գյումրին տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոնն է։
6) Ճյուղի առաջատար ենթաճյուղերից է քիմիական մանրաթելերի արտադրությունը։